

## ՀՀ բանկային համակարգի 2013 թ-ի երրորդ եռամսյակի գործունեության ամփոփում

2013 թ-ի երրորդ եռամսյակի, ինչպես նաև ամբողջ ինն ամիսների ընթացքում համակարգը գործել է բնականոն հունով՝ ապահովելով զրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով համեմատական բարձր աճ: Ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում բանկային համակարգի մաքուր շահույթը կազմել է մոտ 36.71 մլրդ դրամ, վնասը՝ 1.44 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 35.27 մլրդ դրամ, այդ թվում՝ երրորդ եռամսյակում համակարգի մաքուր շահույթը կազմել է մոտ 14.76 մլրդ դրամ, վնասը՝ 0.03 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 14.73 մլրդ դրամ: Ընթացիկ տարվա ինն ամիսները վնասով են փակել համակարգի երեք բանկ, իսկ հաշվետու եռամսյակը՝ երկու բանկ:


### Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2013 թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում աճել են 3.0 %-ով կամ 78.5 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 2,719.6 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա երրորդ եռամսյակում ակտիվներն ավելացել էին մոտ 86.3 մլրդ դրամով կամ 3.9 %-ով: Վերոնշյալին ավելացնենք, որ ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 12.7 %-ով կամ 307.4 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել էին 10.7 %-ով կամ 221.3 մլրդ դրամով: Տեղին է արձանագրել, որ համակարգի ընդհանուր ակտիվների նվազում էր գրանցվել միայն նախորդ տարվա առաջին եռամսյակում. այն կազմել էր մոտ 0.9 % կամ 18.9 մլրդ դրամ:


### Վարկային ներդրումներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 0.6%-ով կամ 10.9 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 1.3 %-ով կամ 2.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 1,786.2 և 175.5 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա երրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 0.9 %-ով կամ 14.5 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 6.7 %-ով կամ 9.7 մլրդ դրամով: Միևնույն ժամանակ նշենք, որ ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում համակարգի վարկային ներդրումներն ավելացել են 10.2 %-ով կամ 165.8 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 4.0 %-ով կամ 6.8 մլրդ դրամով: Համադրելու համար նշենք, որ նախորդ նույն ժամանակամիջոցում համակարգի վարկային ներդրումներն ավելացել էին 17.1 %-ով կամ 228.0 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 15.1 %-ով կամ 20.3 մլրդ դրամով: 2013-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 65.7 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 63.8 %-ը կամ 1,139.1 մլրդ դրամ, և վերոնշյալ ցուցանիշն երրորդ եռամսյակի ընթացքում աճել է 1.1 %-ով կամ 12.1 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 0.3 %-ի կամ 3.2 մլրդ դրամի դիմաց: Շարադրվածին միայն հավելենք, որ ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում տնտեսությանը տրված վարկերն ավելացել են մոտ 8.7 %-ով կամ 90.9 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա ինն ամիսների ընթացքում՝ 15.7 %-ով կամ 138.2 մլրդ դրամով:

2013 -ի սեպտեմբերի 30-ի դրությամբ վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2013 -ի երրորդ եռամսյակի ընթացքում աճել են 2.0 %-ով կամ 10.8 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 560.9 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա երրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 1.4 % կամ 6.6 մլրդ դրամ: Միաժամանակ նշենք, որ ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում Ֆիզիկական անձանց տրված վարկերը ավելացել են 14.5 %-ով կամ 71.2 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 19.2 %-ի կամ 74.4 մլրդ դրամի դիմաց: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 31.4 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 20.4 %-ը կամ 364.8 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 7.8 %-ը կամ 139.0 մլրդ դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 1.6 %-ով կամ 5.8 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 4.1 %-ով կամ մոտ 5.5 մլրդ դրամով, ընդ որում՝ նախորդ տարվա երրորդ եռամսյակում սպառողական վարկերի ծավալն աճել էր 5.7 %-ով կամ 16.0 մլրդ դրամով, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 2.6 % կամ 3.1 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում սպառողական վարկերն ավելացել են մոտ 13.3 %-ով կամ 42.9 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերը՝ 13.4 % կամ 16.5 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում վերը նշված ցուցանիշները համապատասխանաբար ավելացել էին՝ 18.5 %-ով կամ 46.3 մլրդ դրամով և 11.2 %-ով կամ 12.5 մլրդ դրամով:



**Պարտավորություններ**


2013-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 2,274.7 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 19.6 %-ով կամ 372.6 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 2.7 %-ով կամ 60.7 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա երրորդ եռամսյակում՝ 4.4 %-ով կամ 80.3 մլրդ դրամով:

Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում աճել են 4.1 %-ով կամ 34.1 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել 2.0 %-ով կամ 12.1 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 857.4 և 594.0 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել է 5.4 % կամ 36.2 մլրդ դրամ, ցպահանջ ավանդների նվազումը՝ 1.4 % կամ 2.1 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել 11.4 % կամ մոտ 29.4 մլրդ դրամ, ցպահանջ ավանդների նվազումը՝ 11.9 % կամ 41.5 մլրդ դրամ:


Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա երրորդ եռամսյակում նվազում էր գրանցվել միայն ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդների գծով. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել էին 5.5 %-ով կամ 35.5 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները աճել էին 7.2 %-ով կամ 37.1 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները նվազել 1.2 %-ով կամ 1.6 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները աճել էին 9.1 %-ով կամ 43.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 8.4 %-ով կամ 20.3 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 9.8 %-ով կամ 22.9 մլրդ դրամով:

Միաժամանակ փաստենք, որ ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում պարտավորություններն աճել են 13.6 %-ով կամ 272.0 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի՝ 12.0 %-ի կամ 203.1 մլրդ դրամի դիմաց, ընդ որում՝ ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել են 16.6 %-ով կամ 122.0 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 19.3 %-ով կամ 114.5 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 5.3 %-ով կամ 7.5 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 20.9 %-ով կամ 102.6 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդներն աճել են 14.0 %-ով կամ 35.3 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 28.1 %-ով կամ 67.3 մլրդ դրամով: Համադրելու համար նաև նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել էին 22.8%-ով կամ 127.3 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 26.6 %-ով կամ 115.6 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 9.4 %-ով կամ 11.7 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 4.7 %-ով կամ 23.4 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները աճել էին 25.5 %-ով կամ 53.3 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները նվազել 10.4 %-ով կամ 29.9 մլրդ դրամով: Ասվածին միայն հավելենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 63.8 %-ը:


Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը 2013 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ (մլրդ դրամ)



Համակարգում ժամկետային ավանդների փոփոխման դինամիկան




### Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան



### Ընդհանուր կապիտալ

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 4.2 %-ով կամ 17.8 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 444.9 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում այն ավելացել էր 1.5 %-ով կամ 6.0 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում բանկերի ընդհանուր կապիտալը ավելացել է մոտ 8.6 %-ով կամ 35.4 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում՝ 4.8 %-ով կամ 18.2 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից կանոնադիր կապիտալը հաշվետու եռամսյակում աճել է 2.7 %-ով կամ 6.6 մլրդ դրամով, իսկ չբաշխված շահույթը (եկամուտների պահուստը)՝ 15.8 %-ով կամ 25.8 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 250.7 և 189.2 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 56.4 և 38.3 %-ը, ընդ որում՝ նախորդ տարվա երրորդ եռամսյակում կանոնադիր կապիտալը աճել էր 3.8 %-ով կամ 9.0 մլրդ դրամով, իսկ եկամուտների պահուստը՝ 7.6 %-ով կամ 10.2 մլրդ դրամով:

### Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան



**Եկամուտներ եվ ծախսեր**

2013 թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 94.9 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 76.5 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա երրորդ եռամսյակում ընդհանուր եկամուտները կազմել էին 83.4 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 69.0 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ հաշվետու եռամսյակի ընդհանուր եկամուտները և ծախսերը նախորդ եռամսյակի ընդհանուր եկամուտներին և ծախսերին զիջել են համապատասխանաբար 0.4 %-ով կամ 0.4 մլրդ դրամով և 3.9 %-ով կամ 3.1 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում բանկերը ստացել են 268.4 դրամի եկամուտ և կատարել 223.6 մլրդ դրամի ծախս, իսկ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում համանուն ցուցանիշները համապատասխանաբար կազմել էին՝ 245.4 մլրդ դրամ և 208.1 մլրդ դրամ:


**Շահույթ**

ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 14.73 մլրդ դրամ մաքուր շահույթ (շահութահարկը հանած), որը 2012 թ.-ի նույն ժամանակամիջոցում ապահոված մաքուր շահույթին գերազանցել է 3.31 մլրդ դրամով: Ասվածին նաև ավելացնենք, որ ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում համակարգում ապահովվել է 35.27 մլրդ դրամի մաքուր շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի՝ 29.16 մլրդ դրամի դիմաց:

**Ամփոփ ցուցանիշներ**

2013-ի երրորդ եռամսյակի արդյունքներով բանկային համակարգի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 8.44 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 1.36%: Պետք է արձանագրել, որ անցած տարվա նույն ժամկետի համեմատ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության աճ 0.67տոկոսային կետով, ինչպես նաև ակտիվների շահութաբերության աճ 0.02 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2013 -ի սեպտեմբերի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի,  
դրանց աճը/նվազումն երրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.  
(մլն դրամ)

Գ/Գ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա- կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ/ վնաս	Զբաղ. շահույթ III-եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ Բանկ	263946,2	1,2	3	186194,3	-1,8	211093,7	0,7	4	61275,8	6,8	52852,5	2,8	1	30000,0	0,0	14358,8	1528,2
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	227883,0	2,7	5	141549,4	-8,0	186644,2	2,4	5	52396,2	1,5	41238,7	3,6	2	18434,4	0,0	21108,3	2325,7
3	Արդշինհիմվեստբանկ	261874,3	12,2	4	164578,0	6,3	221482,3	13,6	3	64841,5	5,5	40392,0	4,7	3	15513,6	0,0	20091,6	2075,4
4	ՎՏԲ Գայաստան Բանկ	291116,1	12,0	2	212580,5	3,3	255502,4	12,8	2	78072,2	5,1	35613,7	6,7	5	13906,3	0,0	17548,5	2154,6
5	Կոնվերս Բանկ	119430,2	-1,9	10	81119,0	0,2	102265,6	-1,9	9	33947,1	4,1	17164,7	-1,5	12	4923,3	0,0	8420,1	21,7
6	Յունիբանկ	162333,1	17,6	7	106928,9	-0,1	142913,4	20,3	7	75796,9	4,4	19419,7	0,7	10	11400,7	0,0	7825,0	200,7
7	Գայելոնոմբանկ	70342,4	0,8	13	41774,3	5,1	60117,7	0,4	13	17047,1	6,7	10224,7	3,2	17	2333,3	0,0	2218,6	373,1
8	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	296625,3	-19,0	1	162568,7	0,9	257646,9	-21,3	1	61890,3	9,7	38978,4	-0,4	4	25475,9	0,0	13368,4	1813,6
9	Ինելյոբանկ	123571,1	17,3	9	83173,5	-1,8	101798,6	20,0	10	20696,5	-0,2	21772,5	6,3	7	7894,4	0,0	10654,2	1263,9
10	Գայբիզնեսբանկ	188398,7	3,1	6	127087,3	1,2	165934,0	2,9	6	59672,3	4,2	22464,7	4,8	6	17500,0	0,0	4419,4	1002,8
11	Անելիք Բանկ	60736,4	-4,9	15	34100,3	-6,3	47370,3	-6,2	15	23331,5	-1,7	13366,1	-0,2	14	14300,0	0,0	-1197,7	-21,2
12	Առեկսիմբանկ	157592,0	24,0	8	100000,4	1,9	136241,5	24,0	8	30040,9	1,0	21350,5	24,3	9	16452,1	33,2	4530,1	62,3
13	Արցախբանկ	91086,3	1,0	12	63355,8	0,3	77900,2	1,0	12	16872,7	6,1	13186,1	0,7	15	6561,2	0,0	4456,7	91,2
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	105280,6	-5,0	11	87430,9	1,8	86515,1	-6,9	11	22138,8	11,2	18765,5	5,0	11	8335,4	0,0	9468,4	791,3
15	ԱրմսվիսԲանկ	58853,6	0,7	16	29525,7	-2,6	44940,9	0,4	16	5716,9	15,9	13912,7	1,7	13	7002,0	0,0	4090,5	367,9
16	Զարգ. Գայկական Բանկ	61187,8	10,1	14	42812,2	8,9	52531,2	12,0	14	37820,5	16,4	8656,5	-0,3	19	4556,7	0,0	3730,0	-6,2
17	Պրոմեթեյ Բանկ	56621,5	3,2	17	34152,7	2,9	35219,2	4,0	18	13206,5	3,0	21402,3	2,1	8	14400,0	0,0	6825,6	431,5
18	Բիբլոս Բանկ Գայաստան	42598,9	-1,6	19	32967,3	-2,6	33691,3	-2,1	19	16603,8	-0,4	8907,6	0,4	18	8382,3	0,0	462,2	38,7
19	ԲՏԱ Բանկ	13544,3	5,2	21	7334,0	5,0	7836,6	8,8	20	2940,1	17,0	5707,7	0,5	21	6520,0	0,0	-858,4	59,1
20	Պրոկոնդիտ Բանկ	48652,2	5,9	18	39647,3	4,3	40060,8	0,2	17	12629,7	8,6	8591,4	43,5	20	9990,0	33,4	-1398,6	103,6
21	Սելլաթ Բանկ	17907,6	0,5	20	7281,3	10,0	6953,1	0,6	21	50,7	-37,3	10954,5	0,4	16	6850,0	0,0	3843,5	48,7
	Ընդամենը	2719581,6	3,0		1786161,8	0,6	2274659,0	2,7		706988,0	5,4	444922,5	4,2		250731,6	2,7	153965,2	14726,6